ՀԱՆԴԻՊՈՒՄ

# ՎԻԿՏՈՐԻԱ ՍԻՐԱՁԵՆ ՀՅՈՒՐԸՆԿԱԼՎԵՑ ՎԻՐԱՀԱՅՈՑ ԹԵՄԻ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆՈՒՄ

*Հոկտեմբերի 6-ին, Թբիլիսիի Սուրբ Գեւորգ առաջնորդանիստ եկեղեցու առաջնորդարանում հյուրընկալվեց Վրաստանի հայտնի պետական եւ հասարակական գործիչ, ճանաչված մտավորական Վիկտորիա Սիրաձեն: Նախկին կուսակցական բարձրպաշտոնյային ուղեկցում էին «Վրաստան» թերթի խմբագիր Վան Բայբուրթյանը եւ հասարակական գործիչ Արտեմ Կիրակոզովը:*



Հանդիպմանը Վիկտորիա Սիրաձեն Վիրահայոց թեմի առաջնորդ Վազգեն եպիսկոպոս Միրզախանյանին փոխանցեց անվանի պետական, հասարակական եւ քաղաքական գործիչ, Գրիգորի Հարությունյանի (Արութինով) մասին գիրքը` Նամի Միկոյանի հեղինակությամբ:

Զրույցի ընթացքում հյուրը հանգամանալից ներկայացրեց Վրաստանի կոմկուսի կազմակերպչական գծով քարտուղար, Վրաստանի կոմկուսի Թբիլիսիի քաղաքային կոմիտեի առաջին քարտուղար, ապա Հայաստանի կոմկուսի Կենտկոմի առաջին քարտուղարությունը ստանձնած Գրիգորի Հարությունյանի գործունեությունը, պատմեց նրա ընտանիքի մասին, որի հետ առանձնապես մտերիմ է եղել ինքը:

Վրաստանի կոմունիստական կուսակցության բարձրաշտոնյան պատմեց նաեւ Ամենայն Հայոց կաթողիկոս երջանկահիշատակ Վազգեն Առաջինի մասին: Վիկտորիա Սիրաձեն սիրով կիսեց իր հուշերը Հայոց կաթողիկոսի հետ ունեցած իր հանդիպումներից:

Վիրահայոց առաջնորդի հետ զրույցի ժամանակ նա հիշեց խորհրդային ժամանակաշրջանում հայ գործիչների հետ իր բարեկամական կապերի մասին:

Վազգեն Սրբազանը իր շնորհակալությունը հայտնեց Վիկտորիա Սիրաձեին այցի համար, ողջունեց հայազգի քաղաքական եւ հասարակական գործչին նվիրված գրքի հրատարակությունը:

Սրբազան Հայրը մեծ պատիվ համարեց պատկառելի տարիքով նման անձնավորության այցելությունը առաջնորդարան եւ առաջարկեց առաջիկայում կազմակերպել նրա հանդիպումը հայ համայնքի հետ:

ԿՐԹԱԿԱՆ

# ՍՏՈՐԱԳՐՎԵՑ ՓՈԽՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՀՈՒՇԱԳԻՐ





Գիտելիքների մակարդակի բարձրացման եւ աշակերտների շարժառիթի ուժեղացման նպատակով, Վրաստանի կրթության եւ գիտության նախարարության ու «Էտալոն» մեդիա նախագծի միջեւ ստորագրվեց փոխհամագործակցության հուշագիր: Այն ստորագրեցին կրթության եւ գիտության նախարար Ալեքսանդր Ջեջելավան ու «Էտալոնի» հեղինակ Գոչա Տղեշելաշվիլին:

Հուշագրի շրջանակներում կողմերի միջեւ կծավալվի ակտիվ համագործակցություն:

Վրաստանի օրենսդրությամբ սահմանված կարգով նախարարությունը նախագծի շրջանակներում իր կողմից աջակցելու է ռեսուրսկենտրոններին տեղեկատվության հարցում, այն առումով, որ հանրային դպրոցները ծրագրված ակտիվությունների վերաբերյալ կստանան անհրաժեշտ տեղեկատվություն:

ՆԱԽԱԳԻԾ

# ՁԵՌԱԳԻՐ ՏՊԱԳՐՈՒԹՅԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՓԱՌԱՏՈՆ ՎՐԱՍՏԱՆՈՒՄ

*Վերջերս Վրաստանում անցկացվեց ժամանակակից արվեստի միջազգային փառատոն, որին մասնակցեցին նկարիչներ` Հայաստանից, Վրաստանից, Մեծ Բրիտանիայից, Գերմանիայից, ԱՄՆ-ից եւ Թուրքիայից:*






Փառատոնի անվանակարգերից մեկը նվիրված էր ձեռագրի արվեստին` պրինտին: Դեռ վերջերս այն մեծ պահանջարկ էր վայելում համաշխարհային ճանաչման արժանացած այնպիսի գործիչների, ինչպիսիք էին Ռեմբրանդը, Պաբլո Պիկասոն, Էդվարդ Մունկը, Ալբրեխտ Դյուրերը, Անրի Մատիսը եւ ուրիշներ աշխատել են պրինտի ոլորտում: Փառատոնին հայկական կողմը ներկայացնում էր Հայաստանի արտ-բիզնեսի զարգացման տարածաշրջանային ասոցիացիայի տնօրեն Մարինա Երեմյանը: Նա իր հետ բերել էր ներկայումս ԱՄՆ-ում ապրող Սեմ Զումյանի աշխատանքները, որը նրա խոսքերով, յուրովի շարունակում է հայ հայտնի նկարիչ, գծանկարի վարպետ Էդգար Շահենի ուղղությունը:

Ինչպես նշեց նախագծի տնօրեն Նանա Կիրմելաշվիլին, ձեռագիր տպագրման արվեստը շարունակում է մնալ արտ-բիզնեսի կարեւորագույն ոլորտներից մեկը: Նման տպագրումը լայնորեն տարածված է միջազգային փառատոններում, սակայն մեզանում այն նույնականացվում է էժանագին արտադրանքի հետ: Պատճենահանումը որոշակիորեն դուրս է մղել գրաֆիկի կամ դիզայնի վարպետների աշխատանքների պատճենահանման այդ աշխատատար գործընթացը: Սակայն համաշխարհային ճանաչման արժանացած շատ նկարիչներ դեռեւս օգտվում են ձեռագիր տպագրությունից` բարձր գնահատելով դրա բացառությունը:

Փառատոնի կազմակերպիչները համոզված են, որ այդ ոլորտի ներդնումը ճարտարապետության տեքստիլ, կարի, խեցեգործության եւ արտադրական մյուս ոլորտներում թույլ կտան զգալի առաջընթաց ապահովել վերջիններիս համար:

*ԱՐՏԵՄ ԿԻՐԱԿՈԶՈՎ*

ՆՈՐԱՄՈՒԾՈՒԹՅՈՒՆ

თიბისი ბანკი TBC BANK

# ԱԳՐՈՎԱՐԿ ԴՅՈՒՐԱՑՎԱԾ ԿԱՐԳՈՎ

## TBC ԲԱՆԿԻ ՆՈՐ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆԸ ՖԵՐՄԵՐՆԵՐԻՆ

***Նրանց, ովքեր ցանկանում են Վրաստանի տարածաշրջաններում այգիներ հիմնել, TBC բանկը հետաքրքիր նորամուծություն է առաջարկում: «Սերմանի՛ր ապագան» նախագծին մասնակից ֆերմերները կարող են գումարի որոշակի մասը դյուրացված կարգով ստանալ TBC բանկից: «Այգիների բաղադրիչ» պետական ծրագիրը նախատեսում է բազմամյա մշակաբույսերի նոր այգիների հիմնման համար ֆերմերներին ֆինանսական եւ տեխնիկական օգնության ցուցաբերում:***

Ֆերմերները պետությունից դրամաշնորհի տեսքով կարող են ստանալ տնկիների արժեքի 70 տոկոսը, արդի ոռոգման համակարգերի տեղակայման համար անհրաժեշտ գումարի 50 տոկոսը, իսկ գումարի մնացած մասը նրանք կարող են ստանալ TBC բանկից, որը նախագծի մասնակից անձանց վարկերը առաջարկում է արտոնյալ պայմաններով:

Մասնավորապես, վարկի գումարը սահմանափակված է 10 հազար լարիով, տոկոսադրույքը 18 տոկոսով: Վարկը վերցնողին տրվում է հնարավորություն առանց եկամուտների հաստատման եւ միայն հողամասի ներդրմամբ կամ եկամուտների հաստատման դեպքում, ընդ ուրում, առանց որեւէ երաշխավորության ստանալ վերոնշյալ վարկը:

Վարկի ստացման պարտադիր պայմանն է, որ բենեֆիցարի սեփականության ներքո լինի առնվազն մեկ հեկտար հողատարածք Վրաստանի հետեւյալ տարածաշրջաններում` Կախեթի, Շիդա Քարթլի, Քվեմո Քարթլի, Մցխեթա-Մթիանեթի, Սամցխե-Ջավախեթի, Իմերեթի, Սամեգրելո-Զեմո Սվանեթի, Գուրիա, Աջարիա, Ռաճա-Լեչխումի-Քվեմո Սվանեթի: Աճեցման համար նախատեսված բազմամյա մշակաբույսերի ցանկը մեծ է եւ սահմանափակումը առնչվում է միայն խաղողի այգիների հիմնմանը:

«TBC բանկը 2015 թականից ակտիվորեն ներգրավվել է ագրոուղղությունների ֆինանսավորմանը: Մենք գյուղատնտեսության նախարարության հետ միասին մեր սպառողներին մի շարք նախագծեր ենք ներկայացրել, որոնք գյուղատնտեսության ոլորտում ներգրավված մարդկանց օգնում են զարգացնել իրենց գործունեությունը:

Ներկայումս մշակել ենք «Սերմանի՛ր ապագան TBC բանկի հետ միասին» նախագիծը, որը ֆիզիկական անձանց հնարավություն է տալիս մնացած աշխատանքների ավարտման համար օգտվել դյուրացված պայմաններով ագրովարկից եւ արտոնյալ տոկոսադրույքից:

Մեզ համար նշանակալից է, որ մեր բաժինը ներդնենք երկրի ագրոհատվածի զարգացման գործում եւ ֆիզիկական անձանց հնարավորություն ընձեռենք զարգացնել իրենց բիզնես ուղղությունները»,- հայտարարեց TBC բանկի գլխավոր տնօրենի տեղակալ Նինո Մասուրաշվիլին:




Նախագծում ներգրավված բենեֆիցարները պետությունից կստանան նաեւ տեխնիկական օգնություն: Մասնավորապես, նրանք կարող են անցնել վարժանքներ եւ խորհրդատվություններ: «Գյուղատնտեսական նախագծերի կառավարման գործակալությունը «Միասնական ագրոնախագիծ» ծրագրի շրջանակներում իրականացնում է մի շարք նախագծեր, որոնք նախատեսված են երկարաժամկետ զարգացման համար եւ ուղղված են գյուղատնտեսության ոլորտում մրցակցության բարձրացման, բարձրորակ արտադրանքի արտադրության խրախուսման աջակցությանը, պարենամթերքի պիտանիությանը եւ պարենամթերքի անվտանգության ապահովմանը:

Վրաստանի գյուղատնտեսության մրցունակության բարձրացման եւ ֆերմերների ու գյուղի բնակիչների կենսամակարդակի բարելավման համար անհրաժեշտ է ներդրումների գրավում: Դրա համար պարտադիր է մասնավոր հատվածի եւ ֆինանսական կազմակերպությունների ակտիվ ներգրավումը այնպիսի նորարարական հստակ եւ գործուն մոդելների իրականացման գործընթացում, որոնք կխրախուսեն գյուղատնտեսությունում ներդրումների ներգրավմանը»,- հայտարարեց գյուղատնտեսական նախագծերի կառավարման գործակալության տնօրեն Մարինա Մորգոշիան:

«Սերմանի՛ր ապագան» նախագծի նպատակն է մեծացնել Վրաստանում գյուղատնտեսական հողերի օգտագործման արդյունավետությունը բազմամյա մշակաբույսերի այգիների հիմնման ուղիով, որի արդյունքում կիրականացվի ներկրվող արտադրանքի փոխարինումը եւ կավելանա արտահանման ներուժը, կդյուրացվի վերամշակող արտադրությունների համար հումքի ապահովումը եւ կբարելավվի գյուղի բնակիչների սոցիալական եւ տնտեսական վիճակը:

Շահագրգռված անձինք մանրամասն տեղեկատվությունը կամ խորհրդատվությունը կարող են ստանալ ինչպես TBC բանկի մասնաճյուղերում, այնպես էլ հեռախոսային կենտրոնի միջոցով:

Ð²ðò – ä²Î²êÊ²Ü ❋ ²ÚÈ²¼²Ü ❋ ÊàðÐàôð¸Üºð

² è àÔæ ² ä ²ÐàôÂÚàôÜ

# ՄԱՇԿԸ ԿՊԱՏՄԻ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ



***Լսել եմ, որ կան մասնագետներ, որոնք մաշկի ուսումնասիրմամբ կարողանում են ախտորոշել այս կամ այն հիվանդությունը: Որքանո՞վ է դա համապատասխանում իրականությանը:***

***Տ. Սիմոնյան***

***Բոլնիսի***

*Իրոք, մաշկը օրգանիզմի հիվանդությունների արտահայտման յուրատեսակ հայելին է: Թեպետ դա հասկանալու համար պարտադիր չէ մասնագետ լինել: Ստորեւ ներկայացնում ենք առանձին դեպքեր, որոնք ձեզ կօգնեն ինքնուրույն բացահայտել այս կամ այն հիվանդությունը:*

Եթե արթնանալիս ձեր վերին կոպերն այտուցված են նշանակում է, որ ձեր երիկամները ծանրաբեռնված են: Պետք է հրաժարվել աղի կերակուրներից, գարեջրից, գինուց:

Աչքերի տակ կապտությունը հիմնականում արտահայտված է լինում ծխողների եւ սրտի ու արյան շրջանառության հետ կապված խնդիրներ ունեցողների մոտ:

Դեմքի այտուցվածությունը, որը երեկոյան կողմ նույնպես չի անհետանում, վկայում է ենթաստամոքսային գեղձի ծանրաբեռնվածության եւ D վիտամինի պակասի մասին: Հրաժարվեք քաղցր կաթնամթերքից (յոգուրտ, պաղպաղակ եւ այլն):

Բերանի անկյուններում ճաքերը վկայում են B խմբի վիտամինների պակասի, հաստ աղիքի հետ կապված խնդիրների մասին: Կերակրացանկում ընդգրկեք ձկնեղեն, պինդ պանիրներ, սեւ հաց:

ՀԵՏԱՔՐՔԻՐ Է

# ԱՇԽԱՐՀՈՒՄ ՕՐԱԿԱՆ ԽՄՈՒՄ ԵՆ 225 ՄԻԼԻԱՐԴ ԲԱԺԱԿ ՍՈՒՐՃ

*Սուրճը վաղուց արդեն մոլորակի միլիոնավոր բնակիչների «լավագույն ընկերն» է դարձել: Որոշ տվյալներով՝ աշխարհում օրական 2.25 միլիարդ բաժակ սուրճ են խմում:*



Վրաստանը եւ Հայաստանն այն երկրների շարքում են, որոնց բնակիչների մեծ մասը սուրճի մոլի սիրահարներ են, սուրճ են խմում միշտ եւ ամենուրեք, օրվա ցանկացած ժամին:

Այստեղ ամենատարածվածն արեւելյան սուրճն է՝ «սեւ սուրճը»: Շատ հաճախ հենց այս ըմպելիքի շուրջ են համախմբվում մարդիկ, որից հետո սկսվում են հետաքրքիր քննարկումներ: Հիմնականում լուծվող սուրճը նախընտրում է երիտասարդությունը:

**Հետաքրքիր փաստեր սուրճի մասին**

❑ Սուրճի արտադրության 40% կատարվում է Բրազիլիայում:

❑ Սուրճամոլների 70%-ը խմում է «Արաբիկա» տեսակի սուրճ, իսկ 30%-ը՝ «Ռոբուստա», որը ավելի ցածր կարգի է, բայց ավելի դիմացկուն է չորացմանն ու հիվանդություններին, նրանից 2 անգամ ավելի շատ բերք կարելի է ստանալ, քան «Արաբիկայից»: «Արաբիկա»-ն իր մեջ պարունակում է 1% կոֆեին, իսկ «Ռոբուստա»-ն՝ 2%: Լուծվող սուրճ արտադրողները հիմնականում խառնում են այս երկու տեսակի սուրճերն իրար հետ:

❑ Սուրճի ծառի երկարությունը կարող է հասնել 9 մետրից մի փոքր ավելի, սակայն քանի որ հարմար է սուրճը հավաքել ավելի փոքր բարձրությունից, այժմ սուրճի ծառի բարձրությունը հազվադեպ է անցնում 3 մետրը:

❑ Սուրճի ամենամեծ սիրահարներն ապրում են ԱՄՆ-ում, ամենաշատ սուրճը խմում են հենց ԱՄՆ-ում:

❑ Գոյություն ունի սուրճի պատրաստման մի քանի հազար ձեւ՝ այդ թվում նաեւ կարմիր պղպեղով, սխտորով եւ նույնիսկ կարագով: Սակայն այս բոլոր ձեւերի մեջ ամենաօգտակարը սուրճի պատրաստման Սկանդինավյան ձեւն է:

❑ Աշխարհում ամենաշատ վաճառվող ապրանքների մեջ սուրճը զբաղեցնում է երկրորդ հորիզոնականը. առաջին հորիզոնականում նավթն է:

❑ Սուրճն այժմ ավելի, քան 700 տարեկան է:

❑ Առանց շաքարավազի սեւ սուրճի կալորիականությունը 0 է:

❑ Ամերիկանո տեսակի սուրճն առաջացել է Երկրորդ աշխարհամարտի ժամանակ՝ ամերիկացի զինվորները չէին կարողանում խմել եվրոպական սուրճը, այդ իսկ պատճառով նրանք ջուր ավելացրին այդ սուրճի վրա:

❑ Սուրճի ակնթարթային ազդեցությունը միֆ է. իրականում սուրճն ազդում է խմելուց 30 րոպե անց, եւ նրա ազդեցությունը մնում է 2-6 ժամ:

Սուրճի համաշխարհային օրը նշվում է սեպտեմբերի 29-ին:

ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

# ԻՆՉՊԵ՞Ս ԿԱՐԳԱՎՈՐԵԼ ՆՍՏԵԼԱՏԵՂԸ

(Սկիզբը՝ նախորդ համարում)



**Ղեկանիվն ու նստելատեղի բարձրությունը**

Ղեկանվի կարգավորման հնարավորություն ունենալու դեպքում այն անհրաժեշտ է կարգավորել այնպես, որ ղեկը «10 ու 2» դիրքում պահող դաստակները ուսերի մակարդակից քիչ ներքեւ գտնվեն: Սովորաբար որքան ցածր է գտնվում ղեկն, այնքան հարմար է այն պահելն ու այնքան քիչ են հոգնում ձեռքերը: Սակայն միեւնույն ժամանակ պետք է հիշել, որ ղեկը չպետք է փակի սարքերի վահանակն եւ կպնի ոտքերին:

Եթե ձեր ավտոմեքենան հնարավորություն է տալիս կարգավորել նաեւ նստելատեղի բարձիկն, ապա այն փոքր ինչ բարձրացնելը թույլ կտա մի փոքր մեծացնել տեսադաշտը: Դրանում ոչ մի սխալ բան չկա, կարեւորն այն է, որ մյուս բոլոր կարգավորումները նորմալ լինեն:

**Գլխակալի կարգավորում**

Երթեւեկության ընթացքում վարորդի գլուխը չպետք է կպնի գլխակալին:

Վերջինիս հիմնական նշանակությունը ոչ թե գլուխն անընդհատ պահելն է, այլ՝ ճՏՊ-ի ժամանակ՝ մեքենայի հետնամասի կողմից հարվածի դեպքում պարանոցային ողերի պաշտպանությունը: Ընդ որում՝ որքան բարձր է գլխակալն ու որքան մոտ է ծոծրակին, այնքան ավելի է արդյունավետ է պարանոցի պաշտպանվածությունը:

Ուստի՝ գլխակալը ցանկալի է բարձր տեղադրել, որպեսզի գլուխը ետ «գցելիս» պարանոցի միջին հատվածը գլխակալի միջնամասին կպնի:

**Մասնագիտական գաղտնիքներ**

Ղեկի մոտ նստելիս աշխատեք հաստ ձմեռային հագուստ չհագնել, որը ծավալուն միջնաշերտ կառաջացնի վարորդի մարմնի ու նստելատեղի միջեւ:

*Ինչո՞ւ:*

Ճանապարհածածկի անհարթությունները, թեքությունները, մեքենայի անվի ուղեկապումը եւ շատ այլ՝ նման բաներ վարորդները զգում են մեջքով ու «հինգերորդ կետով» հենց նստելատեղից ստացած «ինֆորմացիայից»:

Ուստի՝ վարորդի մարմնի ու նստելատեղի միջեւ հաստ միջնաշերտը զրկում է վարորդին ավտոմեքենայի մասին ճիշտ ժամանակին ստացված կարեւորագույն ինֆորմացիայից: Նույն պատճառով էլ X-Drive ավտոդպրոցի փորձառու ինստրուկտորները խիստ անցանկալի են համարում նստելատեղն արհեստականորեն բարձրացնել՝ վրան ինչ-որ բան տեղադրելով:

ԻՄԱՍՏՈՒՆ ԽՈՍՔ

# ՄԻ ԲԱԺԱԿ ՋՐԻ ՈՒ ԿՈՂՊՎԱԾ ԴՌԱՆ ՄԱՍԻՆ

Մի օր մարդ ու կին որոշեցին ոչ մեկի առջեւ դուռը չբացել: Առավոտյան դռան զանգից արթնացան, դիտանցքից նայեցին ու տեսան, որ դռան առջեւ ամուսնու ծնողներն են կանգնած: Մարդ ու կին իրենց որոշումից հետ չկանգնեցին ու դուռը չբացեցին: Ամուսնու ծնողները գլխիկոր հեռացան... Որոշ ժամանակ անց դռան զանգը կրկին հնչեց: Ամուսինները դիտանցքից նայեցին ու տեսան, որ այս անգամ էլ կնոջ ծնողներն էին կանգնած: Էլի չէին ուզում բացել, սակայն կինը սկսեց արտասվել, ամուսինը խղճաց նրան եւ դուռը բացեց:

Ժամանակ անցավ: Նրանք չորս որդի ունեցան, հինգերորդ զավակն աղջիկ ծնվեց: Այդ առթիվ ամուսինն ուրախ խնջույք կազմակերպեց: Երբ ընկերները հետաքրքրվեցին, թե ի՞նչն է նրան այդքան ուրախացրել, այն դեպքում, երբ նույնիսկ տղաների ծնվելն այդքան ճոխությամբ չէր նշել, նա ժպտալով պատասխանեց. «Ծնվել է նա, ով դուռը կբացի իմ առջեւ»:

Իհարկե կյանքում ամեն ինչ հարաբերական է, ու կապ չունի զավակը տղա է, թե աղջիկ: Շատ ավելի ճիշտ չէ մեկին կյանք պարգեւելիս մտածել, թե կարեւորն այն է, որ քեզ ջուր տվող կլինի: Իսկ ամենակարեւորն այն է, որ յուրաքանչյուր զավակ ծնողի առջեւ դուռը միշտ բաց պահի:

## ԹԵՎԱՎՈՐ ՄՏՔԵՐ



Որտեղ երկու տուն հայեր կան, նրանց մեջ չորս կուսակցություն կա: Անմիաբանությունը վաղեմի ժամանակներից մեր ազգի կյանքի մեջ այն ուտող, մաշող ցեցն է եղել, որ ժառանգաբար անցել է մեզ:

***ՐԱՖՖԻ***
***(1835-1888)***
***Հայ գրող***

Երբ նեղն է մարդ, այնժամ են պետք նրան եղբայր ու հարազատ:

***ՇՈԹԱ ՌՈՒՍԹԱՎԵԼԻ***
***(1172-1216)***
***Վրաց բանաստեղծ***

Անոթալի ոչ մի բան մի՛ արա ո՛չ ուրիշների ներկայությամբ, ո՛չ էլ գաղտնի: Քո առաջին օրենքը պետք է լինի հարգանքը՝ ինքդ քո նկատմամբ:

***ՊԼԱՏՈՆ***
***(մ.թ.ա.427-մ.թ.ա.347)***
***Հին հույն փիլիսոփա***

Ուրիշներին որեւէ բան ասելուց առաջ, դա ասա՛ ինքդ քեզ:

***ՍԵՆԵԿԱ***
***(մ.թ.ա.4-65)***
***Հռոմեացի փիլիսոփա***

Առավել դժվարը ոչ թե մարդուց, այլ նրա ընծայած երազանքից հրաժարվելն ու այն մոռանալն է:

***ԷՐԻԽ ՄԱՐԻԱ ՌԵՄԱՐԿ***
***(1898-1970)***
***Գերմանացի գրող***

Կնոջն այնպես է պետք սիրել, որ նրա մտքով երբեւէ չանցնի, թե կարող է գտնվել մեկը, որն իրեն ավելի ուժգին կսիրի:

***Ա.ՊԵՏՐՈՍՅԱՆ***
***«Վրաստանի» ընթերցող***

## ²Ü º Î ¸ à Î Ü º ð

*☺ Ձեռքը կոտրած հիվանդը բժշկին հարցնում է.*

*- Բժիշկ ջան, որ ձեռս լավանա, կկարողանա՞մ ջութակ նվագել:*

*- Իհարկե կարող ես,- պատասխանում է բժիշկը:*

*- Վա՜յ ինչ լավ է,- ուրախանում է հիվանդը,- առաջ ընդհանրապես չէի կարում ջութակ նվագել:*

*☺ Երկու հայ զրուցում են.*

*- Ախպեր մի ժամանակ աշխարհում մենք էինք, Ասորեստանն ու Աստված...*

*- Է հետո՞ ինչ...*

*- Է հետո Ասորեստանը վերացավ: Հետո մենք էինք Բաբելոնն ու Աստված...*

*- Է հետո՞...*

*- Է հետո Հռոմն էր, մենք ու Աստված...*

*- Հետո՞...*

*- Հետո Հռոմն էլ վերացավ... Հետո մենք էինք, Բյուզանդիան ու Աստված...*

*- Հետո՞...*

*- Հետո Բյուզանդիան էլ, վերացավ...*

*- Ախպեր, ի՞նչ ես ուզում ասես:*

*- Ախպերս, վայթե մենք ու Աստված ֆինալ ենք հելե...*

*☺ Կինը օժանելիքների խանութում.*

*- Ասացեք խնդրեմ, դուխի ունե՞ք կոմպյուտորի հոտով:*

*Վաճառող.*

*- Ի՞նչ:*

*- Կոմպյուտորի հոտով: Ուղղակի ես ուզում եմ, որ ամուսինս ինձ վրա ուշադրություն դարձնի:*

# ՀԱՅԱՍՏԱՆ - ԱՐՑԱԽ. Փաստեր, իրադարձություններ

«ՎՐԱՍՏԱՆԻ», ԱՐՄԵՆՊՐԵՍԻ, ՊԱՆԱՐՄԵՆԻԱՆԻ ԵՎ ԿԱՎԿԱԶՊՐԵՍԻ ՆՅՈՒԹԵՐՈՎ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՆԱԽԱԳԱՀԸ ԵՎՐՈՊԱԿԱՆ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԳԱԳԱԹԱԺՈՂՈՎՈՒՄ



*Հոկտեմբերի 20-ին աշխատանքային այցով Մաաստրիխտում գտնվող Հայաստանի նախագահ Սերժ Սարգսյանը, մասնակցեց եվրոպական ժողովրդական կուսակցության (ԵԺԿ) գագաթաժողովին:*

Այն վարել է ԵԺԿ նախագահ Ժոզեֆ Դոլը: Գագաթաժողովին մասնակցել են Եվրոպական խորհրդի նախագահ Դոնալդ Տուսկը, Եվրոպական հանձնաժողովի նախագահ Ժան-Կլոդ Յունկերը, Եվրոպական միության եւ Արեւելյան գործընկերության անդամ երկրներից ԵԺԿ-ին անդամակցող կուսակցությունները ներկայացնող պետությունների եւ կառավարությունների ղեկավարները:

Օրակարգի շրջանակներում գագաթաժողովի մասնակիցները քննարկել են Եվրոպական խորհրդի առաջիկա նիստի նախապատրաստական աշխատանքները, անդրադարձել փախստականների ճգնաժամի շուրջ վերջին զարգացումներին, ԵՄ տնտեսական, ինչպես նաեւ արտաքին քաղաքականությանն առնչվող հարցերին:

Սերժ Սարգսյանը գագաթաժողովում հանդես է եկել ելույթով, որում անդրադարձել է տարածաշրջանային խնդիրներին եւ մարտահրավերներին:

## ՕՐԱԿԱՐԳՈՒՄ ԵԿԵՂԵՑԻ-ՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԵՏԱԳԱ ԱՄՐԱՊՆԴՄԱՆ ՀԱՐՑՆ ԷՐ

*Հոկտեմբերի 19-ին Հայաստանի վարչապետ Կարեն Կարապետյանը կառավարությունում հյուրընկալեց Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Երկրորդ Ամենայն Հայոց Կաթողիկոսին:*



Վարչապետը շնորհակալություն հայտնեց Վեհափառին՝ կառավարություն այցելելու համար եւ նշեց, որ մեծապես կարեւորում է պետություն-եկեղեցի համագործակցությունը:

Վեհափառը Վարչապետին ու կառավարության նորանշանակ անդամներին մաղթեց հաջողություններ եւ արդյունավետ գործունեություն՝ ի նպաստ երկրի բարեկեցության, դժվարությունների հաղթահարման, ծեռքբերումների եւ հաջողությունների ամրագրման:

Այնուհետեւ Հայաստանի Վարչապետն եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսը քննարկեցին մի շարք հարցեր, որոնք վերաբերել են եկեղեցի-պետություն հարաբերությունների հետագա ամրապնդմանն ու այլ խնդիրներին:

## «ՀԱՅՈՑ ՊԵՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ՝ ՄԻԱՍՆՈՒԹՅԱՆ ԱՌԱՆՑՔ» ԼՐԱԳՐՈՂՆԵՐԻ 8-ՐԴ ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՄԱԺՈՂՈՎԸ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

Համաժողովը բացեց Հայաստանի սփյուռքի նախարար Հրանուշ Հակոբյանը: Համաժողովին ներկայացվեց նաեւ ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանի ուղերձը, որում պետության ղեկավարը կարեւորեց Սփյուռքում լրատվամիջոցների դերը:

Համաժողովին հնչեց նաեւ Ն.Ս.Օ.Տ.Տ Ամենայն հայոց կաթողիկոս Գարեգին Բ-ի օրհնության խոսքը:

«Հայոց պետականությունը՝ միասնության առանցք» խորագրով լրագրողների 8-րդ համահայկական համաժողովին այս տարի մասնակցում է 65 խմբագրության ղեկավար:Համաժողովի նպատակը համահայկական տեղեկատվական դաշտի ընդլայնումն ու կատարելագործումն է, լրատվական ներուժի համախմբումը եւ արդյունավետ կիրառումըՀայաստանի զարգացման, ՀՀ միջազգային վարկանիշի բարձրացման, Սփյուռքում հայապահպանության, համահայկական խնդիրների լուծման գործընթացում:

Համաժողովում ելույթ ունեցավ «Վրաստան» թերթի խմբագիր Վան Բայբուրթյանը:

Համաժողովի մասնակիցները հոկտեմբերի 20-ին հանդիպում ունեցան Հայաստանի վարչապետ Կարեն Կարապետյանի, արտաքին գործերի նախարար Էդվարդ Նալբանդյանի հետ:

Հոկտեմբերի 22-ին համաժողովի մասնակիցները Ստեփանակերտում հանդիպում կունենան Լեռնային Ղարաբաղի Հանրապետության նախագահ Բակո Սահակյանի եւ վարչապետ Արայիկ Հարությունյանի հետ:

Հոկտեմբերի 24-ին համաժողովի մասնակիցներին կընդունի Հայաստանի նախագահ Սերժ Սարգսյանը:

## ՆԵՐԿԱՅԱՑՎԵՑԻՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ



*Հոկտեմբերի 20-ին Հայաստանի վարչապետ Կարեն Կարապետյանը երկրի Ազգային ժողովի պատգամավորներին ներկայացրեց իր գլխավորած կառավարության ծրագիրը:*

Վարչապետի հավաստմամբ, կառավարության ծրագիրը միջոցառումների համալիր է՝ սահմանված ժամկետներով եւ նպատակ է հետապնդում հանրապետությունում բարեփոխումների միջոցով ապահովել երկրի գերագույն արժեքի՝ Հայաստանի քաղաքացու՝ պաշտպանվածությունը, արժանապատվությունը, կենսամակարդակի բարձրացումը, արդար հասարակության մեջ ապրելը, ապագայի նկատմամբ լավատեսությունը:

«Կառավարության խնդիրն է՝ վեր հանել դրանց հասնելու խոչընդոտները եւ դրանց արդյունավետ կերպով լուծումներ տալ»,-հայտարարեց վարչապետը:

Կարեն Կարապետյանը խոսեց նաեւ կառավարության առջեւ դրված ռազմավարական խնդիրների մասին: Մասնավորապես երկրի պաշտպանության եւ անվտանգության հարցը, որը Հայաստանի թիվ մեկ խնդիրն է:

«Կարեւորագույն խնդիր է նաեւ 2015 թվականի փոփոխություններով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության կենսագործումը: Մենք պետք է հետեւողականորեն կյանքի կոչենք ժողովրդավարական ինստիտուտների հետագա զարգացումն ապահովող, քաղաքական գործընթացների եւ ինստիտուտների նկատմամբ վստահությունն ավելացնող միջոցառումներ»,-ընդգծեց Վարչապետը:

Իր խոսքում Վարչապետն անդրադարձավ առանձին ոլորտներում իրականացվող բարեփոխումների թեմային, նշելով, որ դրանց իրականացումը լուրջ նախադրյալ կդառնա երկրի սոցիալ-տնտեսական առաջընթացի համար:

## ՆԵՐՄՈՒԾՎԱԾ ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԱՐԺԵՔԸ ՆՎԱԶԵԼ Է

*2016 թվականի հունվար-օգոստոսին Հայաստան են ներմուծվել 95 մլն 577,3 հազար ԱՄՆ դոլար ընդհանուր արժողությամբ վերգետնյա, օդային եւ ջրային տրանսպորտի միջոցներ:*



Ըստ Հայաստանի Ազգային վիճակագրական ծառայության հրապարակած տվյալների, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ Հայաստան ներմուծված տրանսպորտի միջոցների ընդհանուր արժեքը կրճատվել է շուրջ 22%-ով: 2015 թվականի հունվար-օգոստոս ամիսներին ցուցանիշը կազմել էր մոտ 122 մլն 594,6 հազար ԱՄՆ դոլար:

Հայաստան ներմուծման ընդհանուր կառուցվածքում վերգետնյա, օդային եւ ջրային տրանսպորտի միջոցների մասնաբաժինը կազմել է մոտ 5%:

2016 թվականի հունվար-օգոստոսին Հայաստան է ներմուծվել 275 մլն 173,6 հազար ԱՄՆ դոլարի մեքենաներ, սարքավորումներ եւ մեխանիզմներ, ինչը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ աճել է 4,3 տոկոսով:

Հայաստան ներմուծման ընդհանուր կառուցվածքում մեքենաների, սարքավորումների եւ մեխանիզմների մասնաբաժինը կազմել է մոտ 13,8 տոկոս:

### «ԱՐՄՀԱՅՏԵՔ-2016» ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՑՈՒՑԱՀԱՆԴԵՍ ԵՐԵՎԱՆՈՒՄ

***Հայաստանի Նախագահ Սերժ Սարգսյանը այցելեց սպառազինության եւ պաշտպանական տեխնոլոգիաների «ԱրմՀայՏեք-2016» առաջին միջազգային ցուցահանդես: Ցուցահանդեսն անցկացվեց «Երեւան էքսպո» ցուցահանդեսային համալիրում:***

***Այն կազմակերպվել է ՀԱՊԿ անդամ պետությունների ռազմատնտեսական համագործակցության միջպետական հանձնաժողովի որոշման հիման վրա:***

***«ԱրմՀայՏեք-2016» ցուցահանդեսի շրջանակներում ցուցադրվում են նորագույն տեխնոլոգիական լուծումներ, օպտիկաէլեկտրոնային սարքեր, տվյալների փոխանցման համակարգեր, ժամանակակից սպառազինության նմուշներ, ահաբեկչության դեմ պայքարի ստորաբաժանումների հանդերձանք, սահմանների հսկման համակարգեր, անօդաչու թռչող սարքեր եւ այլն:***

### ԿՍՏԵՂԾՎԻ ՍՓՅՈՒՌՔԱՀԱՅԵՐԻ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐԻՆ ՕԺԱՆԴԱԿՈՂ ՄԱՐՄԻՆ

***Հայաստանի կառավարության ծրագրերը Սփյուռքի նախարարության գործունեության ոլորտում ուղղված են լինելու նաեւ տնտեսական ծրագրերի իրականացմանը: Այդ մասին հայտարարել Հայաստանի Սփյուռքի նախարար Հրանուշ Հակոբյանը:***

***«Շեշտադրումն ավելի տնտեսական է լինելու, տնտեսական բարեփոխումներ են իրականացվելու, իսկ ամենագլխավորը՝ մեր նախարարությունում պետք է ստեղծվի մարմին, որը մեկ պատուհանի սկզբունքով պետք է կարողանա սփյուռքահայերին ծրագրեր իրականացնելիս օգնել խորհրդատվությամբ, այդ թվում՝ իրավական առումով»,- ասաց Հակոբյանը:***

***Նրա խոսքով՝ կառավարության ծրագրում առկա են նաեւ սիրիահայերի եւ իրաքահայերի ինտեգրման խնդիրներին վերաբերող կետեր:***

### ԳՐԱՆՑՎԵԼ Է ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՈՒԹՅԱՆ ԱՃ

***Հայաստանի տնտեսական ակտիվության ցուցանիշը 2016 թվականի հունվար-սեպտեմբերին 1.6 տոկոսով գերազանցել է նախորդ տարվա նույն ժամանակահատվածի ցուցանիշը: Այս տարվա սեպտեմբերին օգոստոսի համեմատ ցուցանիշն աճել է 7 տոկոսով:***

***Հայաստանի ազգային վիճակագրական ծառայության տվյալներով անկում է գրանցվել շինարարության, առեւտրի շրջանառության, էլեկտրաէներգիայի արտադրության ոլորտներում:***

### ԿԱՆԽԱՏԵՍՎՈՒՄ Է 2 ՏՈԿՈՍ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՃ

***Հայաստանի 2016 թվականի տնտեսական աճը կարող է կազմել 2 տոկոս, իսկ 2017 թվականին՝ 2.4 տոկոս: Նման կանխատեսում է արել Եվրասիական զարգացման բանկը՝ 2016 թվականի զեկույցում:***

***ԵԱԶԲ-ի զեկույցում նշված է, որ Հայաստանը Եվրասիական տնտեսական միությունում 2016 թվականի առաջին կիսամյակում ՀՆԱ-ի աճի տեմպերով զբաղեցնում է առաջին տեղը: Եվրասիական բանկի փորձագետները դա կապում են Հայաստանից հիմնական ապրանքային խմբի արտահանման ավելացման հետ:***

CyanMagentaYellowBlack



ԵԿԵՂԵՑԱԿԱՆ

## ՀՈԿՏԵՄԲԵՐ



***23.10.2016. Տոն խաչի Գյուտի:***

Խաչի Գյուտը Քրիստոսի խաչափայտին նվիրված չորս տոներից է:

327 թվականին բյուզանդական Կոստանդիանոս կայսեր մայրը՝ Հեղինեն, Տիրոջ խաչը գտնելու նպատակով այցելում է Երուսաղեմ: Հուդա անունով մի հրեա օգնում է կայսրուհուն գտնել Քրիստոսի խաչվելու վայրը՝ Գողգոթան, որտեղ որոնումների արդյունքում հայտնաբերվում են Հիսուսի եւ նրան խաչակից երկու ավազակների խաչերը: Տիրոջ խաչը ճանաչելու համար մի պատանու դիակ հերթով դնում են դրանց վրա, որոնցից մեկի վրա պատանին հարություն է առնում, եւ այդպես ճանաչվում է տերունական խաչը: Այդ հրաշքից հրեա Հուդան քրիստոնեություն է ընդունում եւ հետո դառնում է Երուսաղեմի Կյուրեղ եպիսկոպոսը: Խաչափայտի գյուտից հետո Հեղինեն բարեզարդում է Երուսաղեմի սրբազան վայրերը, իսկ Գողգոթայում կառուցում Սբ. Հարություն եկեղեցին, որտեղ հետագայում զետեղվում է Տիրոջ խաչափայտը:

***25.10.2016. Սամոսատում նահատակված Սբ. Հիպիրիքյանների հիշատակության օր***

***27.10.2016. Սեւերիանոս Սեբաստացու, Բաբելա Ծերունու եւ նրա ութսունչորս աշակերտների հիշատակության օր***

ԵՐԹԵՎԵԿՈՒԹՅՈՒՆ

# ԼԱՐՍԻԻ ԱՆՑԱԿԵՏԸ ԲԱՑ Է ԱՆՎԱՇՂԹԱՆԵՐՈՎ ԲՈԼՈՐ ԱՎՏՈՄԵՔԵՆԱՆԵՐԻ ՀԱՄԱՐ



***Վրաստանի ներքին գործերի նախարարության արտակարգ իրավիճակների դեպարտամենտից ստացված տեղեկատվության համաձայն, Լարսի անցակետը բաց է բոլոր տեսակի ավտոմեքենաների համար՝ անվաշղթաների կիրառման դեպքում:***

Իր հերթին Հայաստանի արտակարգ իրավիճակների նախարարությունը տեղեկացնում է, որ Հայաստանի տարածքում կան դժվարանցանելի ավտոճանապարհներ:

Մասնավորապես, դժվարանցանելի է Սոթք-Քարվաճառ ավտոճանապարհը, Տիգրանաշենի ոլորաններում տեղ-տեղ առկա է մերկասառույց, իսկ Արագածոտնի մարզի Ապարան քաղաքում եւ Արագած գյուղում՝ մերկասառույց:

«ԽԵԼԱՑԻ ՀԱՇՎԻՉՆԵՐ»

# ՍՊԱՍԱՐԿՈՒՄՆԵՐԻ ՆՈՐ ՀԱՄԱԿԱՐԳ ԷՆԵՐԳԵՏԻԿԱՅԻ ՈԼՈՐՏՈՒՄ




***Վրաստանի էներգետիկայի նախարարությունը մտադիր է իրականացնել նոր նախագիծ, որը նախատեսում է, այսպես կոչված, «խելացի հաշվիչների» մոնտաժում: Սպասարկման նոր համակարգին անցման արժեքը վճարելու է բնակչությունը:***

Նոր հաշվիչը տարբեր սակագներով հանրագումարում է էլեկտրաէներգիան, որը սպառվում է ցերեկը եւ գիշերը: Այդ պրակտիկան արդեն հաջողությամբ ներդրված է զարգացած տարբեր երկրներում, սակայն փորձագետների համոզմամբ, Վրաստանը դեռեւս պատրաստ չէ նման նորամուծության:

Վրաստանի էներգետիկայի նախարարությունում դեռեւս չեն կոնկրետացնում, թե ինչ գումար կարժենա բավականին թանկարժեք այդ նախագծի իրականացումը, թեպետ ընդգծում են, որ դրա արժեքը ներառվելու է սպառված էլեկտրաէներգիայի սակագնի մեջ, ինչը նախատեսում է էլեկտրաէներգիայի սակագնի ավելացում:

Ծրագրվում է նախնական փուլում «խելացի հաշվիչները» տեղադրել խոշոր արտադրություններում, որի տվյալներով սեփականատերը ինքնուրույն կորոշի աշխատել էժան էլեկտրաէներգիայի հաշվին, թե դեռեւս անհայտ սակագնով մատուցվող էներգիայով: Ամենայն հավանականությամբ, նորամուծության արդյունքում, շատերը ստիպված կլինեն աշխատել գիշերային ժամերին:

ՍՊՈՐՏ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԱՐՄՆԱՄԱՐԶԻԿՆԵՐԸ ԹԲԻԼԻՍՅԱՆ ՄՐՑԱՇԱՐՈՒՄ

Մարմնամարզության Հայաստանի հավաքականի անդամները հաջող են հանդես եկել Թբիլիսիում կայացած միջազգային մրցաշարում:

Վիգեն Խաչատրյանը առաջին հորիզոնականն է զբաղեցրել նժույգթափերի վարժությունում, իսկ օղակների վարժությունում լավագույնը Վահագն Դավթյանն է ճանաչվել: Նույն վարժության երկրորդ տեղում երիտասարդ Արթուր Ավետիսյանն է:

## ՎԱՐԿԱՆՇԱՅԻՆ ՆՈՐ ԱՂՅՈՒՍԱԿԸ՝ ՑՈՒՑԱԴՐԱԾ ԽԱՂԻ ՀԱՅԵԼԻ




Ֆուտբոլի միջազգային ֆեդերացիան (ՖԻՖԱ) հրապարակել է աշխարհի երկրների հավաքականների վարկանշային նոր աղյուսակը:

Վրաստանի հավաքականը նոր աղյուսակում առաջադիմել է 15 աստիճանով եւ ներկայումս զբաղեցնում է 122-րդ տեղը:

Ի տարբերություն Վրաստանի թիմի, Հայաստանի ազգային ընտրանին 13 հորիզոնականով նահանջ է գրանցել եւ հանգրվանել 125-րդ տեղում:

Դասակարգման աղյուսակը գլխավորում է Արգենտինայի հավաքականը, որին հաջորդում են Գերմանիայի, Բրազիլիայի, Բելգիայի, Կոլումբիայի, Չիլիի, Ֆրանսիայի, Պորտուգալիայի, Ուրուգվայի եւ Իսպանիայի ընտրանիները:

## ԱՐԹՈՒՐ ՊԵՏՐՈՍՅԱՆԸ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՎԱՔԱԿԱՆԻ ՆՈՐ ՄԱՐԶԻՉ

Ինչպես տեղեկացրել է Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիայի պաշտոնական կայքը, լեգենդար ֆուտբոլիստ Արթուր Պետրոսյանը կգլխավորի Հայաստանի ազգային հավաքականը:

ՀՖՖ-ն ավարտել է բանակցությունները Հայաստանի ազգային հավաքականի գլխավոր մարզչի նշանակման հետ կապված եւ նոյեմբերի 1-ից Հայաստանի ազգային հավաքականի նախկին ֆուտբոլիստ, ներկայումս շվեյցարական «Ցյուրիխ-2» թիմի գլխավոր մարզիչ Արթուր Պետրոսյանի հետ կկնքվի համապատասխան պայմանագիր:

Հիշեցնենք, որ 2018 թվականի Աշխարհի առաջնության ընտրական փուլի առաջին երեք խաղերում կրած պարտություններից հետո հրաժարական էր տվել հավաքականի նախկին մարզիչ Վարուժան Սուքիասյանը:

# ԽԱՉԲԱՌ




***ՀՈՐԻԶՈՆԱԿԱՆ.*** 6.Առավոտյան ցող, շաղ: 8.Սրբապատկեր: 10.Իսպանական ֆուտբոլի «թագավորական» ակումբ: 11.Խոսքի բաղկացուցիչ մաս: 13.Թակարդ, որոգայթ: 14.ԽՍՀՄ ժողովրդական արտիստուհի … Վարդերեսյան: 16.Հայ հեղափոխական գործիչ: 17.Հայոց այբուբենի տառ: 18.Կոռիզ, ներսի մաս: 20.Մսով եւ բրնձով եփած թանձր կերակուր: 22.Ոգելից խմիչք: 23.Անգլիացի բեւեռախույզ Ռոբերտ …: 27.Ըստ Աստվածաշնչի՝ Նոյի կրտսեր որդին: 29.Հարսի ու փեսայի ծնողները: 32.Պահեցողություն որեւիցէ կերակուրից, պահք: 33.Տան մուտք: 35.Էլեկտրականապես չեզոք նյութի մասնիկ, որը կազմված է դրական լիցք ունեցող միջուկից եւ բացասական էլեկտրոնային ամպից: 36.Ռուսաստանի ժողովրդական արտիստուհի … Սմեխովա: 37.«Նա … մենակ» (ֆիլմ): 39.Կտավ կրծող ուտիճ: 42.Գորգի զարդ: 44.Գեորգի Դանելիայի ֆիլմերից: 46.Նավի վրա բարձր սյուն առագաստների համար: 49.Բողբոջ, ընձյուղ: 50.Կակաչ, վարդակակաչ: 53.Թռչունի բերան: 54.Ծուռ, խոտոր: 55.Կղզի Վանա լճում: 56.Լեհ գրող Բոլեսլավ …: 57.Դերասանի, ճառախոսի ամբիոն: 58.Միջազգային Ֆուտբոլի Ֆեդերացիաների Միություն: 59.Արու ուղտ: 60.Ընտիր, դրական: 61.Կաղջնակ, տափափուշ:

***ՈՒՂՂԱՀԱՅԱՑ.*** 1.Ուղղածիգ վերսլացք–վայրէջքով թռչող ապարատ: 2.Եբրայերեն բառ, որը նշանակում է՝ «ճշմարի՛տ է»: 3.Գրող … Կապուտիկյան: 4.Ամերիկյան կինոդերասանուհի եւ երգչուհի Մերիլին …: 5.Ոչ իրական, մոլորության մեջ գցող: 7.Ուղարկում, հղում: 9.Անտաշ, կոպիտ: 12.Ծեր, ալեւոր: 15.Միկրոսկոպիկ կենդանի: 19.Զոկ, զորախումբ: 21.Սպիտակ բյուրեղային նյութ, որ օգտագործվում է ուտելիքը համեմելու համար: 24.Փաթեթ, հակ: 25.Նմուշ, տիպ: 26.Պետության օրհներգ: 28.Իշխան, ամիրա: 30.XIV դարի պարսկական գրականության հուշարձան Թութի-…: 31.Քուրմ, գուշակ: 33.Հինդուիզմում տիեզերքի ավերման եւ վերակերպման մարմնացումը: 34.Շարքով քայլերդ: 38.Ոջիլի ձու: 40.Աչքի ընկնող, կարկառուն: 41.Երկընտրանք: 42.Մարզ Հունաստանում: 43.Արաբ ամիրապետ: 45.Ֆրանսիացի ֆուտբոլիստ … Պլատինի: 47.Հողի մակերեսի տարածաչափ: 48.Ստեղծագործելու պահանջ, ներշնչում: 51.Հայաստանի վաստակավոր արտիստ … Գյունաշյան: 52.Տարվա եղանակ:

***Կազմեց ԷԼԼԱ ԱԹԱԲԵԿՅԱՆԸ***

## ՆԱԽՈՐԴ ՀԱՄԱՐԻ ԽԱՉԲԱՌԻ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐԸ

***ՀՈՐԻԶՈՆԱԿԱՆ.*** 1.Գամմա: 4.Սազ: 7.Եֆիմ: 11.Կարոտ: 12.Մտախոհ: 14.Նալ: 15.Մայր: 16.Ցուցամատ: 18.Գիժ: 19.Սան: 20.Ամուլ: 22.Կենգուրու: 25.Արուս: 27.Ջահ: 29.Ելենա: 31.Ապինա: 33.Գունավոր: 34.Նյու: 35.Իմ: 38.Եմեն: 40.Գա: 42.Արիա: 44.Ռիմա: 47.Լոր: 48.Նյալա: 49.Ուրալ: 51.Գոգ: 52.Բար: 54.Գահ: 56.Բկլիկ: 57.Ստնտու: 59.Ուդ: 61.ՄԱԿ: 62.Արամե: 63.Արա: 64.Աղասի:

***ՈՒՂՂԱՀԱՅԱՑ.*** 2.Աբաս: 3.Մրոցի: 4.Սանա: 5.Արամ: 6.Զոլա: 8.Ֆրանս: 9.Միրոն: 10.Օմեգա: 13.Հուժկու: 17.Տարզան: 18.Գլան: 21.Մել: 23.Եսայի: 24.Գրիգ: 26.Րաֆֆի: 27.Ջիվանի: 28.Հարիսա: 29.Երնեկ: 30.Եղունգ: 32.Նունե: 36.Մար: 37.Նինո: 39.Եռաբլուր: 41.Ալլա: 43.Այգ: 49.Ուրմիա: 50.Ագամա: 51.Գանգա: 53.Ահդա: 55.Հսկա: 58.Ունի: 60.Ներ: 62.Աճ:

Խմբագրի տեղակալ՝ ՅՈՒՐԻ ՊՈՂՈՍՅԱՆ

Մեր հասցեն՝ Թբիլիսի 0105
Գ.Աքոնելի փ. 5 Հեռ. 2990-739, 2990-774
www.vrastan.ge
E-mail: vrastan@caucasus.net

Գրանցման վկայական
№ 4 4 - 1439
«ԿՈԼՈՐ» հրատարակչություն

“ВРАСТАН”
Тбилиси, Грузия
<VRASTAN>
Georgia, Tbilisi
Индекс 66445